



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«14» 10 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000084

Ձեռնարկողը՝

«Զարկ» ՍՊԸ

Լոռու մարզ, Արջուտ համայնք

Գործունեությունը՝

Արտադրողի գրանդիորիտների հանքերևակման
տեղամասում 2019-2020թթ. ընթացքում կատարվելիք
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000084

<< 14 >> 10 2019թ.

Արտարտեղի գրանդիրների հանքերակման տեղամասում 2019-2020թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«Ջարկ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Երկրաբանական ուսումնասիրության
նախնական գնահատման
հայտ (Գ կատեգորիա)

Գտնվելու վայրը՝

Լոռու մարզ

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է 2019-2020թթ. ընթացքում կատարել Լոռու մարզի Արտատեղիի գրանդիրիտների հանքերակման տեղամասում ընդերքի երկրաբանահետախուզական աշխատանքներ: Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունը կատարվելու է «Ջարկ» ՍՊԸ-ի ուժերով և ֆինանսական միջոցներով, սեփական հումքային բազա ստեղծելու համար:

Գործունեության իրականացման նպատակն է գնահատել գրանդիրիտների հատվածքի պարամետրերը, որական հատկանիշները՝ երեսապատման և շինարարական քարի, ինչպես նաև արտադրական թափոնների, որպես դեկորատիվ խիճ և ավազ օգտագործելու համար:

Համաձայն նախնական գնահատման հայտի հայցվող տարածքը գտնվում է Լոռու մարզի Գուգարք համայնքի սահմաններում՝ Փամբակ գետի անանուն վտակի վերին հոսանքի ավազանում, որը հետախուզվող տեղամասից գտնվում է 150մ հեռավորության վրա: Հետախուզվող տարածքին ամենամոտ բնակավայրը Լերմոնտովո գյուղն է՝ 3,6 կմ:

Շրջանի կլիման լեռնային է, խոնավ: Տարեկան միջին տեղումների քանակը կազմում է 700-750 մմ: Երևակման տարածքի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները գտնվում են սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում:

Տարածաշրջանով հոսում է Փամբակ գետն (1370 կմ²) իր Կարբի (102 կմ²) վտակով: Գրունտային ջրերի խորությունը Կարբի գետի հովտում տատանվում է 10-ից մինչև 24մ: Հանքերակման տեղամասը գտնվում է 2350-2594մ բացարձակ բարձրությունների վրա, զբաղեցնելով 10 հա տարածք: Համաձայն նախնական հայտի հայցվող տարածքի հորերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական են, գործառնական արտոնավայր:



Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրվող տարածքն ունի խիստ կտրտված ռելիեֆ՝ խոր ձորերով և խոշոր բարձրացումներով, զառիթափ լանջերով և ամբողջությամբ մերկացված տեղանքով: Հանքերակման տեղամասում լայն տարածում ունեն ժամանակակից առաջացումները՝ դեյուվիալ-պրոլյուվիալ խճաբեկորային նստվածքներով: Ուսումնասիրվող շրջանում գրանոդիորիտները ներկայացված են մուգ մոխրագույն, երբեմն կանաչամոխրագույն երանգով, ճեղքավորված ապարների տեսքով: Երևակման տեղամասն իր երկրաբանական կառուցվածքի բարդությամբ և մորֆոլոգիական բնութագրով դասվում է 1-ին խմբին: Համաձայն ARM WGS-84 համակարգի՝ հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատներն են.

1. X=8468290 Y=4518375

2. X=8468419 Y=4518337

3. X=8468299 Y=4517746

4. X=8468107 Y=4517922

Ըստ նախնական հայտի երևակման տարածքում սողանքային երևույթներ, քարաթափություն չեն արձանագրվել:

Համաձայն գնահատման հայտի երևակման տարածքում գրունտային ջրերի հորիզոնները բացակայում են: Հետախուզվող տարածքում առկա են քաղցրահամ, խմելու համար պիտանի լեռնային աղբյուրների ելքեր, որոնք հետախուզվող տարածքից գտնվում են 1.5-2 կմ հեռավորության վրա:

Երևակման տարածաշրջանում զարգացած են լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, սևահողերը, գորշ և դարչնագույն անտառային, գետահովտադարավանդային հողերը: Երևակման տարածքին ավելի բնորոշ են լեռնամարգագետնային հողերի՝ ճմային և մարգագետնատափաստանային սևահողանման ենթատիպերը: Բուն Արտատեղիի երևակման տարածքն իրենից ներկայացնում է ծառերից զուրկ բացատ, որտեղ տարածված են ենթալայան հացազգի և տարախոտահացազգային համակեցություններ: Կենդանական աշխարհին բնորոշ է համեմատաբար աղքատ և միատեսակ կազմը՝ մողես, սովորական լորտու, իսկ թռչուններից՝ կարճամատ ճնճուկը: Տարածքում առկա են սովորական դաշտամկան բներ: Համաձայն հայտի երկրաբանական հետախուզման տարածքում բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են հորատանցքերի, մերկացումների, փորձնական բացահանքի անցման աշխատանքներով՝ նմուշարկման զուգորդությամբ: Երկրաբանական ուսումնասիրությունը կատարվելու է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթի, հորատման, փորձնական բացահանքի, մերկացումների և հիդրո-ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների, հորատհանուկի և փորձնական բացահանքի փաստագրման, նմուշարկման, հորատահրապարակների կառուցման աշխատանքների միջոցով: Օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկվելու են արդյունաբերական C_i կարգով:

Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2019թ. 4-րդ եռամսյակից մինչև 2020թ. 2-րդ եռամսյակը:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է 50մ² րնդհանուր մակերեսով փորձնական բացահանքի բացում: Փորձնական բացահանքի անցումը կատարվելու է առանց պայթեցման աշխատանքների՝ 14-րդ կարգի ապարներում: Հանվելու է 300 մ³ ծավալով փորձնական հանույթ, որից 200 մ³ թարմ գրանոդիորիտներ են, 57.5 մ³-ը՝ ճեղքավորված, փշրված գրանոդիորիտները և 42.5 մ³-ը՝ գրանոդիորիտների բեկորների



առկայությամբ հողաբուսական շերտն է: Թարմ գրանդիորիտները և արդյունահանված զանգվածն ուղարկվելու են ընկերության գոյություն ունեցող քարամշակման արտադրամաս՝ շինարարության համար դրանց պիտանելիությունը որոշելու նպատակով: Իսկ փորձնական բացահանքից և հորահարթակներից (27.3 մ³) հանված հողաբուսական շերտը կուտակվելու և պահեստավորվելու է առանձնացված տարածքում, որը նմուշարկման աշխատանքներից անմիջապես հետո փխրեցվելու և օգտագործվելու է խախտված՝ 180 մ² տարածքների (հորահարթարակներ՝ 130 մ², փորձնական բացահանք՝ 50 մ²) հարթեցման համար: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում՝ հորատող հաստոցի կիրառման միջոցով, կատարվելու է նաև 15-30մ խորությամբ 4 սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատում(90,0զծ.մ): Կատարվելու են լեռնային փորվածքների՝ փորձնական բացահանքի (12.5 զծ.մ), հորատհանուկի (90զծ.մ) և մերկացումների (35.5 զծ.մ) փաստագրում՝ ընդամենը՝ 138,0զծ.մ: Նախատեսվում է նաև 130,0մ² ընդհանուր մակերեսով 4 հորատման հրապարակների կառուցում: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշները ենթարկվելու են լաբորատոր հետազոտությունների: Կատարվելու են ֆիզիկամեխանիկական փորձարկումների (22 նմուշ), քիմիական կազմի (3 նմուշ), պետրոգրաֆիական ուսումնասիրությունների (3 հղկուկ), հորատհանուկի (16 նմուշ), ակոսային(4 մոնոլիտ նմուշ) և համախառն (2 նմուշ, ընդհանուր 300կգ) նմուշարկումներ: Նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ուսումնասիրման ընթացքում օգտագործվելու են տեխնիկատրանսպորտային միջոցներ՝ հաստոց, էքսկավատոր, բուլդոզեր, որոնք հայցվող տարածքում գտնվելու են կարճ ժամանակով:

Համաձայն հայտի ուսումնասիրության ընթացքում թափոններ չեն առաջանալու, քանի որ առաջացած հողային շերտը և մակաբացման ապարները կուտակվելու են անմիջապես փորվածքների հարևանությամբ, պահվելու են կարճ ժամկետով և աշխատանքների ավարտից անմիջապես հետո օգտագործվելու են խախտված տարածքների հարթեցման համար: Տեխնիկա-տրանսպորտային միջոցների սպասարկումը կատարվելու է հայցվող տարածքից դուրս՝ Վանաձոր քաղաքում: Իսկ վերջիններիս շահագործումից առաջացած նավթամթերքների, սպառողական հատկությունները կորցրած յուղերի և քսայուղերի հավաքումը կատարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Նոր ճանապարհներ չեն կառուցվելու, օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային և հանդամիջյան ճանապարհները:

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու (0,1 մ³) և տեխնիկական (50մ³) նպատակներով: Տեխնիկական և խմելու ջուրը բերվելու է ավտոտրանսպորտով Գուգարք գյուղից՝ պայմանագրային հիմունքներով: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքների լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա՝ 68.9 մ³ ծավալով և լանդշաֆտի վերականգնում: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսվելու է 144.0 հազ.դրամ, որը հատկացվելու է շրջակա միջավայրի դրամագլխին: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը կազմելու է 5400 դրամ:

Համաձայն նախնական հայտի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու օդային ավազանի, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային ամբողջականության պահպանման հետ: Ուսումնասիրության ընթացքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ գրունտային ջրերը



տեղադրված են խորը հորիզոնների վրա և երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն լինելու: Կարբի գետի ջրային հոսքի և հիդրոլոգիական ռեժիմի վրա հնարավոր ազդեցությունները բացառելու նպատակով՝ հորատման հարթակները տեղադրվելու են գետից զգալի հեռավորությունների (132-600մ) վրա: Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերի, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի նորմերը: Վտանգավոր թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) կուտակումներ չեն առաջանալու: Բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ հորատման հարթակների կառուցման և փորձնական հանույթի կատարման աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանիների և թռչունների բնադրավայրերից հեռու:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- շահագործման ընթացքում գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ ուժային մեխանիկական սարքավորումների շարժիչների ծածկերի փակում,
- նավթամթերքների պահում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում,
- օգտագործված հորատման թագագլխիկների հավաքում, որպես մետաղական ջարդոն՝ մասնագիտացված կազմակերպություններին վերամշակման նպատակով հանձնում,
- կեղտաջրերի հավաքում դաշտային հորատից զուգարանում,
- հողի բերրի շերտի, պահեստավորում, ծածկում (հողաշերտով), աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- անմիջապես աշխատանքների կատարման վայրում նյութերի (թափոնների) բաց այրման արգելում,
- յուղերի անվտանգ պահեստավորում և փոխադրում, դիզելային վառելիքի մնացորդների հանձնում վերամշակման կետերին,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով (շաբաթը մեկ անգամ),
- մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակի հսկում՝ տարեկան մեկ անգամ,
- արտակարգ իրավիճակներին համապատասխան պատրաստվածության ապահովում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում ավազակոպճային նյութի նկատմամբ շինարարության պահանջարկի բավարարման անհրաժեշտությունից ելնելով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման



Ժամանակահատվածը լինելու է կարճատև և սեզոնային, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննության ընթացքում նախագիծը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լեռնաձոր համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զարկ» ՍՊԸ-ի Արտատեղիի գրանդիորիտների հանքերևակման տեղամասում 2019-2020թթ. ընթացքում ընդերքի երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



[Handwritten signature]

Թ. Նուրիջանյան